ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

Ա. Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

1977 թ. մարտի 1-ին վախճանվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, Հանրապետության պետական մրցանակի դափնեկիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անվանի լեզվաբան Ա. Ս. ՂԱՐԻԲՅԱՆԸ: Դադարեց գործելուց սիրտը մի մարդու,



որն իր անսպառ եռանդը, լայն գիտելիքներն ու անասելի աշխատունակությունը նվիրաբերեց հայագիտության զարգացման, գիտության ու ժողովրդական կրթության բնագավառների համար որակյալ մասնագետներ պատրաստելու մեծ գործին:

Արարատ Սահակի Ղարիբյանը ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին Արտաշատի շրջանի Այգեզարդ (Դարղալու) գյուղում, հողագործի ընտանիքում: 1919 թ. փայլուն առաջադիմությամբ ավարտել է Երևանի արական գիմնազիան: 1923 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և այն ավարտել 1927 թ.: 1928—1930 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում՝ մեծ հայագետ Հ. Աճառյանի ղեկավարությամբ մասնագիտանալով հայոց լեզվի պատմության ուղղությամբ: Այնուհետև Լենինգրադում որոշ ժամանակ հետևել է ակադեմիկոս Ս. Յա. Մարի դասախոսություններին: 1929—1948 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում, 1934 թ. մինչև իր կյանքի վերջը՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Դրանց զուգահեռ տարբեր ժամանակներում աշխատել է նաև Երևանի հեռակա, ռուսական, Լենինականի, Թբիլիսիի, Բաքվի մանկավարժական ինստիտուտներում: Ավանդել է հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, պատմական քերականության, հայոց և ռուսաց լեզուների զուգադրական քերականության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի դասընթացներ. 1934 թ. եղել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի հիմնադիր վարիչը (մինչև 1960 թ.): 1944 թ. հիմնվում է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը, որի առաջին դիրեկտորն է դառնում ինքը: Ապա պաշտոնավարել է որպես ակադեմիայի գրադարանային խորհրդի նախագահ և հիմնակազմ գրադարանի դիրեկտոր: 1947 թ. Ա. Ս. Ղարիբյանն ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1960 թ.՝ իսկական անդամ: 1954 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 1969 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Նա պարգևատրված էր նաև մեդալներով ու պատվոգրերով:

Ա. Ղարիբյանի գիտա-կազմակերպչական աշխատանքը լայն ընդգրկում ուներ: Վերոհիշյալից բացի, նա երկար տարիներ հասարակական կարգով աշխատել է որպես ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ, ղեկավարել է լեզվի, գրականության և արվեստի՝ գիտական աստիճաններ շնորհող միացյալ խորհուրդը, եղել է «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական կոլեգիայի անդամ և այլն: Այս բոլոր դեպքերում բուռն ու բովանդակալից է եղել այդ անձնվեր աշխատավորի գործը:

Նրա անվան հետ են կապված գիտական մի շարք ձեռնարկումներ, որոնց իրագործումը ի սպաս է դրվել գիտության զարգացմանը: Նրա նախաձեռնությամբ լեզվի ինստիտուտում սկսվեց և իրագործվեց հայ նոր գրականության դասական ու ժամանակակից շրջանի լավագույն երկերի քարտագրումը, որն ուղղված էր մեր նոր գրական լեզվի բառապաշարի ուսումնասիրման և ժամանակակից հայերենի բա-

ղատրական բառարանի կազմման նպատակին։ Սկսեց կազմվել ռուս-հայերեն քառահատոր բառարանը, հրապարակվեցին գիտական ժողովածուներ, մենագրություններ և այլն։ Նա խորապես մտահոգված էր հայ հին մատենագրության նշանավոր բնագրերի համաբարբառի ստեղծման խնդրով։ Նախ՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և ապա ակադեմիայի հիմնակազմ գրադարանի շրջանակներում նրա ղեկավարությամբ սկսեց իրականացվել քարտագրումը։ Համեմատաբար կարճ ժամանակում և սակավաթիվ աշխատողների միջոցով ստեղծվեց շատ հարուստ քարտարան, կազմվեցին ու հրապարակվեցին համաբարբառի մի շարք ստվար հատորներ, որոնք արժանացան թե՛ սովետական և թե՛ արտասահմանյան շատ մասնագետների բարձր գնահատականին։ Դա չափազանց կարևոր ձեռնարկում է և, անշուշտ, պիտի շարունակվի նախաձեռնողի մահից հետո ու հասցվի ցանկալի ավարտին։

Առանձնապես նշանակալից է նրա կատարածը հայ բարբառագիտության բնագավառում։ Իր բարբառագիտական աշխատանքը նա ծավալել է երկու ուղղությամբ՝ բարբառային նյութի վերհանումով, գիտության համար նոր հայտնի դարձվող բարբառների գիտական նկարագրությամբ և կուտակված նյութի տեսական ընդհանրացմամբ ու դասդասմամբ։ Հայտնաբերել ու նկարագրել է 15 բարբառ, 6 ենթաբարբառ էլ առաջարկել է ընդունել իբրև բարբառ՝ հենվելով դրանց կառուցվածքային բնորոշ հատկանիշների վրա։ Նա զարգացրել է հայ բարբառների դասակարգման աճառյանական տեսությունը։ Նրա բարբառագիտական հետազոտությունների հանգուցակետը եղավ «Հայ բարբառագիտություն» ծավալուն և լուրջ աշխատությունը (1953 թ.), որը նշանակալից դեր է կատարել մեկանում բարբառագիտական հետագա ուսումնասիրությունների համար։ Շարունակելով իր պրպտումները՝ գիտնականը այնուհետև տվել է բարբառագիտական ուրիշ գործեր ևս։ Ուշագրավ էր գիտական այն բանավեճը, որ նրա նախաձեռնությամբ ծավալվեց հայ բարբառների բաղաձայնական համակարգի առաջացման վերաբերյալ նախ՝ «Պատմաբանասիրական հանդեսում», ապա՝ «Вопросы языкознания» միութենական պարբերականում։ Բարձրացված խնդիրը շարժեց շատ գիտնականների հետաքրքրությունը, և մեր երկրի ու արտասահմանյան մի շարք ճանաչված մասնագետներ առիթ ունեցան իրենց կարծիքն արտահայտելու։ Բանավեճը շատ օգտակար եղավ, քանի որ առաջ քաշվեցին նաև այնպիսի հարցեր, որոնք էական նշանակություն ունեն հայոց լեզվի պատմական զարգացման որոշ կողմերի գիտական լուսաբանության առումով և զգալի նպաստ բերեցին հայագիտության զարգացմանը։

Հայոց լեզվի պատմությանն ու պատմական քերականությանն են նվիրված նրա մի շարք աշխատությունները, որոնցից առանձնապես պետք է նշել «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածությունը» (1937 թ.), որտեղ հեղինակը ձգտել է ուրվագծել հայոց լեզվի անցած պատմական ուղին։ Այնտեղ, իհարկե, կան հետաքրքրական հարցադրումներ, սակայն ելակետային հարցերում հեղինակը ելնում է Ն. Մառի «լեզվի նոր ուսմունքից» այն ժամանակ իշխած դրույթներից։

Մեծ է Ա. Ս. Ղարիբյանի ներդրումը բառարանագրության ասպարեզում։ Հեղինակակցությամբ կազմել, այլև խմբագրել է ռուսերենի հետ առնչվող մի քանի բառարաններ։ Սակայն նրա բառարանագրական գլուխգործոցը եղավ ստվարածավալ «Ռուս-հայերեն բառարանը» (1968 թ.), որն արժանացավ հանրապետության պետական մրցանակի։ Եռանդուն բառարանագիրն սկսել և ուժեղ թափով առաջ էր տանում հայ-ռուսերեն բառարանի ստեղծման աշխատանքը, որը, ցավոք, չհասցրեց ավարտել։

Անգնահատելի է Ա. Ս. Ղարիբյանի վաստակը դպրոցական դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ստեղծման գործում։ Դպրոցին օգնելը եղել է գիտնականի լայնահուն գործունեության էական կողմերից մեկը։ Հատկապես նշելի է 5—6-րդ դասարանների համար գրած հայոց լեզվի նրա դասագիրքը, որը հսկայական դեր կատարեց հայ դպրոցի կյանքում։

Երկար տարիներ ուսուցիչների ու բարձրագույն դպրոցների ուսանողների սեղանի գիրքն են եղել «Հայոց լեզվի մեթոդիկա» (1938 թ., 1947 թ.), «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (1954 թ.) աշխատությունները։ Էլ չենք խոսում մեթոդական այլևայլ ուղեցույցների մասին։

Զարմանալի բեղմնավոր է եղել Ա. Ս. Ղարիբյանի գրիչը։ Նրա գրած գրքերի ու հոդվածների թիվը անցնում է 200-ից։ Ներգործուն էր նրա խոսքը՝ օժտված ընդգծված հռետորականությամբ։ Ա. Ս. Ղարիբյանը ակտիվ խառնվածքի տեր էր։ Իր գործուն մասնակցությունն էր բերում նաև հասարակական աշխատանքներին։ Նա լի էր շատ մտահղացումներով ու ծրագրերով, որոնց իրագործումն անկատար թողնելով՝ հրաժեշտ տվեց կյանքին, որն այնքա՜ն չերմությամբ էր սիրում։

Պրոֆ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ